Ծրագիրը համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար

Իրավական փորձագետ

Ծրագրի նկարագիրը

«Տեղեկատվության մատչելիություն և հետաքննական լրագրություն առավել իրազեկված քաղաքացիների համար» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական Միության կողմից և իրականացվում է «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»-ի և Մաաստրիխտում գործող «Եվրոպական լրագրության կենտրոն»-ի կողմից: Ծրագրի նպատակն է օգնել հայ բնակչությանը՝ հատկապես մարզերում, մեծացնել պետական բյուջեի, պետական ծախսերի վերաբերյալ տեղեկացվածության մակարդակը և իրազեկել կառավարության կողմից բյուջեի ծախսերի վերաբերյալ հաշվետվություն ստանալու իրենց իրավունքների մասին:
Ծրագրի ընթացքում կազմակերպվելու են տարբեր միջոցառումներ՝ դասընթացներ, համաժողովներ, մրցույթներ, դատախաղեր, և այլն:

Նպատակը

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն հայտարարում է իրավական փորձագետների մրցույթ:
Փորձագետի պարտականությունները նեառում են՝

- իրավաբանական աջակցություն ծրագրի ամբողջ ընթացքում իրականացվող միջոցառումների ժամանակ՝ ըստ անհրաժեշտության,
- ծրագրի իրականացման համար անհրաժեշտ իրավաբանական փաստաթղթերի կազմում, անհրաժեշտ իրավական խոհրդատվության տրամադրում, այլ անհրաժեշտ իրավաբանական գործողությունների իրականացում,
- դատախաղերի կազմակերպում և վարում:

Իրավական փորձագետը ծրագրում ընդգրկված կլինի 19 ամսով:

Պահանջվող հմտություններ և փորձ

- բարձրագույն իրավաբանական կրթություն,
- իրավաբանի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ՝ քաղաքացիաիրավական ոլորտում,
- հայերենի և անգլերենի գերազանց իմացություն,
- կազմակերպչական հմտություններ,
- գրավոր և բանավոր հաղորդակցության հմտություններ, ճշտապահություն և ճկունություն:

Դասընթացի ընթացքում դասընթացավար-փորձագետի տեղափոխման, կեցության ու սննդի հետ կապված բոլոր ծախսերը ֆինանսավորվում է ծրագրի կողմից:

Ընտրված դասընթացավար-փորձագետների հետ նախատեսվում է կնքել Ծառայությունների մատուցման մասին պայմանագիր:

Հայտերի ներկայացման կարգը

Ներկայացված պահանջներին բավարարող եւ հետաքրքրված անձինք կարող են իրենց հայտն ուղարկել foi@foi.am էլ. փոստի հասցեին: Նամակի վերնագրում անհրաժեշտ է նշել դասընթացավար-փորձագետի պաշտոնի անվանումը («Իրավական փարձագետ»):

Հայտին պետք է կցված լինի

1. Ինքնակենսագրական (CV)՝ շեշտադրելով տվյալ թեմայով իրականացված դասընթացների փորձառությունը,
2. Հայտատուի անձը/քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ:

Ըստ ինքնակենսագրականում նշված տեղեկատվության ընտրված թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2018թ հուլիսի 9-ը ժամը 24:00:

Հայտի ստացման մասին հայտատուն կտեղեկացվի երկօրյա ժամկետում՝ պատասխան էլեկտրոնային նամակի միջոցով:

Մրցույթի արդյունքի մասին հայտատուն կտեղեկացվի մինչեւ 2018 թ. հուլիսի 17-ը: